«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության
միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան
№ 9 «15» հունիսի 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն՝ 022801.00.6 «Արևելագիտություն»

Կրթական ծրագիր՝ 022801.02.6 «Թյուրքագիտություն»

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Թյուրքագիտություն կրթական ծրագիր, իրագործվող «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից **«022801.02.6 Թյուրքագիտություն»:**

Բակալավրի կրթական ծրագիրը իրագործվում է առկա կրթության ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 4 տարի:

Բակալավրի կրթական ծրագրի ծավալը կազմում է 240 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ կրթական ծրագրի/մասնագիտության շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

«Թյուրքագիտություն» կրթական ծրագիրը համապարփակ ծրագիր է, որը նպատակ ունի ուսանողներին տալ խորքային տեսական և գործնական գիտելիքներ թյուրքալեզու ժողովուրդների լեզվի, պատմության, մշակույթի, քաղաքականության, տնտեսության և սոցիալական կառուցվածքի վերաբերյալ: Ծրագիրը միավորում է ավանդական արևելագիտության մեթոդաբանական փորձը ժամանակակից ակադեմիական մոտեցումներով՝ ապահովելով բազմակողմանի մասնագիտական պատրաստվածություն:

Ծրագրի հիմնական նպատակն է ձևավորել այնպիսի մասնագետներ, որոնք տիրապետում են թուրքերենին և առնվազն մեկ այլ թյուրքական լեզվի, կարողանում են աշխատել բնօրինակ աղբյուրների հետ, իրականացնել թարգմանություններ, վերլուծել և մեկնաբանել տարածաշրջանային գործընթացները՝ հստակ պատկերացնելով թյուրքալեզու երկրների հասարակական, քաղաքական և մշակութային դինամիկան:

Կրթական ծրագրի կարևոր խնդիրներն են՝

- ուսանողների անձնային և մասնագիտական որակների զարգացում՝ ներառյալ պատասխանատվությունը, վերլուծական մտածողությունը, ինքնուրույնությունը, կազմակերպվածությունը և միջմշակութային հաղորդակցության հմտությունները,
- թյուրքական լեզուների խորացված ուսումնառություն՝ բանավոր և գրավոր ազատ տիրապետման մակարդակով,
- համապատասխան տարածաշրջանների պատմության, գրականության, կրոնների, մշակույթի և արդի քաղաքական զարգացումների համակողմանի ուսումնասիրություն,
- աղբյուրների որոնման, ընտրության, վերլուծության և գիտական մշակման հմտությունների ձևավորում,
- հետազոտական և վերլուծական աշխատանքների իրականացում՝ գիտական հրապարակումների, տեքստերի թարգմանության և վերլուծության մակարդակով,
- մասնագիտական փաստաթղթերի, հաշվետվությունների և վերլուծական նյութերի կազմման կարողությունների զարգացում:

Ծրագրի յուրահատկությունն այն է, որ ուսանողները ընտրում են տարածաշրջանային մասնագիտացում դեռ ուսման առաջին փուլում և այդ հիմքի վրա ինտենսիվ կերպով սկսում են ուսումնառությունը՝ թուրքերեն լեզվի կրողների մասնակցությամբ: Բացի լեզվային պատրաստվածությունից, ուսանողները ներգրավվում են գիտական սեմինարների, հետազոտական նախագծերի և միջազգային համագործակցության ծրագրերի մեջ, որոնք ուղղված են պրակտիկ գիտելիքների ամրապնդմանը:

Կրթական ծրագիրը չափազանց ակտուալ է՝ պայմանավորված թյուրքալեզու երկրների աճող դերակատարմամբ տարածաշրջանային և գլոբալ քաղաքական գործընթացներում: Հայաստանի արտաքին քաղաքական ռազմավարության համատեքստում՝ հատկապես Թուրքիայի, Ադրբեջանի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը պահանջում է համապատասխան մասնագետների պատրաստում:

2.2. Բակալավրի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրողական պրակտիկաներ՝

- Ուսումնական պրակտիկայի ձևերը՝ Ներածական (Կրթական), Գիտահետազոտական աշխատանք
- Աշխատանքային պրակտիկայի ձևերը՝ Նախադիպլոմային պրակտիկա

2.3 Պետական ավարտական ատեստացիայի մասի մեջ կարող են մտնել՝

Վերջնական որակավորման աշխատանքի պատրաստում և պաշտպանություն

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտելիքները՝

1. Տիրապետում է թյուրքական ժողովուրդների պատմությանը, մշակույթին, լեզվաբանական առանձնահատկություններին, կրոններին և աշխարհագրությանը:
2. Ունի հիմնավոր պատկերացումներ ժամանակակից թյուրքական պետությունների քաղաքական, սոցիալ-տնտեսական և միջազգային հարաբերությունների մասին:
3. Գիտելիք ունի թյուրքական լեզուների կառուցվածքի, պատմական զարգացման և լեզվական խտրանման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. Ի վիճակի է թյուրքական լեզուներով իրականացնելու բանավոր և գրավոր թարգմանություն՝ օգտագործելով մասնագիտական տերմինաբանություն:
2. Կարողանում է վերլուծել ու մեկնաբանել թյուրքական աղբյուրներից ստացված տեղեկատվությունը՝ կիրառելով ժամանակակից արևելագիտության մեթոդաբանություն:

- *ընդհանրական իմացական հմտությունները՝*

1. Իմաստավորված կերպով կարողանում է օգտագործել տարբեր աղբյուրներ, որոնել, համակարգել և գնահատել տեղեկատվությունը հետազոտական և մասնագիտական նպատակներով:

2. Տիրապետում է ակադեմիական գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններին՝ գիտական կարծիքի ձևակերպման և պաշտպանման համար:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

1. Ի վիճակի է ինքնուրույն կազմակերպել և իրականացնել հետազոտական աշխատանք՝ թյուրքագիտության ոլորտում:
2. Իրականացնում է մասնագիտական գործունեություն՝ առաջնորդվելով էթիկական նորմերով և պատասխանատվությամբ:

Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

- Գիտական-հետազոտական գործունեություն արևելագիտության և թյուրքագիտության ոլորտում:
- Վերլուծական գործունեություն՝ փորձագիտական կենտրոններում, պետական կառույցներում, դիվանագիտական և միջազգային կազմակերպություններում:
- Թարգմանչական և լեզվաբանական գործունեություն՝ ՁԼՄ-ներում, հրատարակչություններում, գիտակրթական հաստատություններում:
- Կրթական գործունեություն՝ որպես թյուրքական լեզուների և մշակույթի դասավանդող բուհերում կամ միջնակարգ ուսումնական հաստատություններում:

Կրթական ծրագրի պահանջարկը.

«Թյուրքագիտություն» կրթական ծրագիրն արդիական է Հայաստանի աշխարհաքաղաքական և տարածաշրջանային պայմաններում՝ հաշվի առնելով Թուրքիայի, Ադրբեջանի, Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների հետ փոխհարաբերությունների կարեւորությունը: Մասնագիտությունն ունի բարձր պահանջարկ ինչպես գիտահետազոտական, այնպես էլ պետական և միջազգային կառույցներում՝ թյուրքալեզու երկրներում քաղաքական, մշակութային, տնտեսական գործընթացների ուսումնասիրության, թարգմանչական

աջակցության, վերլուծության և խորհրդատվության շրջանակում: Ծրագիրը նպաստում է մասնագետների պատրաստմանը, ովքեր կարող են հանդես գալ որպես միջմշակութային հաղորդակցության միջնորդներ՝ ամրապնդելով տարածաշրջանային փոխըմբռնումը և համագործակցությունը: